ԿԱԼԿԱԹԱՅՈՒՄ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ ՃԱՆԱՉՎԵՑ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐԳ-ՉԱԽՈՒՄԲԸ

Դեկտեմբերի 16-ին Կալկաթայի Ս. Մարիամ կաթոլիկ դպրոցում տեղի ունեցավ Ս. Ծննդյան տոնին նվիրված հոգևոր երգերի մրցույթ քաղաքի շուրջ 10 քրիստոնեական դպրոցների երգչախմբերի միջև: Միջոցառմանը մասնակցում էր նաև հայոց Մարդասիրական ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ ճեմարանի երաժշտության ուսուցիչ տիար Վաչագան Թադևոսյանի:

Մրցույթ-հանդիսությունն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո Ս. Մարիամ կաթոլիկ դպրոցի հոգևոր հովիվը բարի գալուստ մաղթեց ներկաներին՝ անդրադառնալով քրիստոնյաների համար Ս. Ծննդյան խորհրդի կարևորությանը: Այնուհետև երգչախմբերից յուրաքանչյուրը անգլերենով կատարեց օրվա խորհրդին նվիրված երկուական երգ:

Արդյունքների ամփոփումից հետո տարվա լավագույն երգչախումբ ճանաչվեց Մարդասիրական ճեմարանինը՝ արժանանալով պատվավոր առաջին մրցանակին: